

## ՀԱՆԴԵՍ ԱՇԽԱՐՀԱԳԻՏԱԿԱՆ

---

### ԿՈՍՏԱՆԴԻՆ ՆԻԿՐԱ


**Աղդային աղատութեան զանազան պտուղներն՝ զոր ուրախութեամբ կը ժողովէ հիմա իտալիա, բազում արեամբ և քրտամբ ցանուած ու ոռոգուած են։ Մարթ է ըսել թէ չկայ բանտ՝ որ հանդիսարան եղած չըլլայ իտալական աքսորելոց, չի գտնուիր իտալիոյ մէջ գողցես թիզ մը երկիր՝ որ ոռոգուած չըլլայ իտալական արեամբ։ Հայրենեաց աղատութեան համար արեամբ չափ վաստակիլը՝ ծնօղը իրրե ժառանգութիւն իրենց որդւոցը կ'աւանդէին, և նոքա եռանդեամբ կ'ընդունէին, և իրենք ալ բանիք կամ օրինակաւ իրենց որդւոց կ'անցունէին իրրե նուիրական աւանդ մը։ Ուստի կրնամք ըսել հաստատութեամբ որ իտալիա օտար ազգաց ազդեցութեան տակ ինկած օրէն սկըսեալ, ջանաց անյողդողդ արութեամբ ձեռք ձգել իր ազգութիւնն, հանելով իրարու ետևէ հայրենեաց արժանաւոր դիւցազուններ, որոնց արեամբն թօթափեց վերջապէս իր վրան ծանրացած լուծն։ Այս դիւցազանց կարգին մէջ որք գողցես անթիւք են, կրնամք դնել զկոստանդին նիկրա, այժմեան իտալիոյ դեսպանն ՚ի Բարիզ։**

Կոստանդին նիկրա ծնաւ ՚ի Բիէմոնդ, և իր հայրենասիրական անձնանուէր կեանքն սկսաւ յամին 1848 և 49 իտալական անկախութեան պատերազմներով, զինուորելով ուսանողաց աղատակամ խմբին մէջ, և նշանաւոր հանդիսացաւ ՚ի ճակատամարտս լոմպարտիոյ, ուր և խոցեցաւ կարեվէր և գերեցաւ ՚ի ձեռս թշնամոյն։ Նովարայի պատերազմէն ետքը, յետ խաղաղութեան առ ժամանակ մի վերահաստատուելուն, եռանդուն և հայրե-

նասէր պատանին նիկրա՝ դառնալով ՚ի դուռին, աւարտեց իր ուսման ընթացքը, զոր պատերազմունք ընդհատեր էին. և ակաղեմական վկայագիրն ընդունելէն ետքը՝ մոտաւ արտաքին գործոց Պաշտօնարանին մէջ, ուր ՚ի սակաւժամանակի վաստը կեցաւ Քավուր կոմսին համարումը ու վստահութիւնը, և հաղորդ եղաւ ականաւոր քաղաքագիւահին գաղտնի մեծամեծ խորհրդոց ու մտածութեանցը. անանկ որ Քավուր մէկտեղ տարաւ զինքը Բարիզի Դեսպանաժողովոյն ու Ցուրիկի Բանագնացութեան, և այս մեծ պատիւ է նիկրայի։

Պէտք է խոստովանիլ որ այս ժողովոց մէջ նիկրայի ցուցած յաջողամտութիւնը աւելի ևս հաստատեցին Քավուր մեծ քաղաքապետին համարումը և ապագայ ակնկալութիւնը։ Ուստի և սա ըստ իւր համարմանը ուղելով գործել, Պաշտօնեայ իտալիոյ անուանեց զինքը ՚ի Բարիզ, որ նոյն ժամանակին ամենէն յարգի ու կարեոր դեսպանութիւնն էր, ՚ի պատճառս խորհրդոց Քավուրի և գործոց իտալիոյ. որ է ըսել՝ թէ Քավուր արտաքին գործոց պաշտօնեայն, վստահացաւ նիկրայի իր քաղաքագիւտական ու դեսպանագիւտական գաղտնիքները։ Եւ արդարն ուղելով ըսել, նիկրա Բարիզի մէջ զօրաւոր գործի մ'եղաւ այն քաղաքագիւտութեան՝ զոր սկսաւ և առաջ տարաւ յամն 1860 և 61 իտալական ազգային ցանկալի միութիւնն։

Նիկրա ինչպէս նոյն ատեն, նոյնպէս և հիմա վտանգաւոր ժամանակիս մէջ մեծ ծառայութիւն կը մատուցանէ իր քաղաքագիւտական մեծ յաջողամտութեամբ։ Վասն զի Գաղղիա չհանեցաւ իտալիոյ զՀռովմ մայրաքաղաք



ԿՈՍՏԱՆԴԻՒՆ ՆԻԿՐԱ

անուանելուն, անոր համար կ'ոխայ միշտ ընդդէմ իտալական պետութեան, մասամբ մը՝ ի կրօնասիրութենէ և յարդարութենէ շարժեալ, և թերես առաւելագոյն մասամբ՝ որովհետեւ կը տեսնայ որ ոտքն կտրեցաւ յիտալիոյ, և ալ պիտի չի կարենայ ունենալ այն աղդեցութիւնն զոր ունէր յայնքան ժամանակաց հետէ՝ ի վերայ իտալիոյ։ Բայց Նիկրա գիտցաւ յաջողութեամբ հանդարտել հանրապետութեան Նախագահը և գաղղիական եռանդուն ազգը, ոչ միայն յօդուա իտալիոյ աշլ

և գաղղիոյ, և կրցաւ թէպէտ ոչ բառնալ բոյորովին, այլ գէլծ հեռացունել այն արիւնահեղ պատերազմը, որուն յաջողութեան թաթը նախսորոշ չէր թէ որ կողմը պիտի հակէր, և թերես՝ ի վսաս գաղղիոյ, որովհետեւ գերմանիա չէր կրնար գիտել անտարբեր աչքով և թողուլ որ գաղղիան յաղթանակէ, որ կրնար ապա և իրեն իսկ սպառնալ բայց համարելով իսկ թէ յաղթէր գաղղիա, չեմք գիտեր թէ յաղթութեամբն ինչ պտուղ կրնար քաղել, և թերես աւելի վսասակար բլար իրեն։